



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




№ 1 ՄԱՍՏԱՏԱԿԱՆ ՍԵՐԻԱ № 1



ԶԱՎԵՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԽԱՆԳԱՐԻՉՆԵՐԸ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈԳԻ
ՅԵՐԵՎԱՆ

1930







ՀԱՎԵՆ ՄԱՐԴԱՐՅԱՆ


ԽԱՆԳԱՐԻՉՆԵՐԸ

(ՄԻ ՊԱՏԿԵՐ ԿՈՍՊԵՐԱՏԻՎ ԱՆՑԱԼԱՑ)

A 8651



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿՈՈՒ
ՅԵՐԵՎԱՆ 1930



ՀԱՅԿՈՈՓԻ ՏՊԱՐԱՆ
ՄԱՐԹԻ ՓՈՂ. Խ 29
ԳՐԱԽԵՎ. Խ 5819ը.
ՏԻՐԱԺ 5000 դ. 409

ԽԱՆԳԱՐԻՉՆԵՐԸ

1.

Մուքելանց Յեղորի մանրավաճառի խանութը գտնվում եր գյուղի կենտրոնական փողոցում։

Դա մի փոքրիկ նկուղ եր, պատերն ու առաստաղը մշտական խոնավ ողից բորբոսնած։ Հնմաշ ու սեացած դարակների վրա անփութորեն լցված եյին փտած խնձորներ, ցեց ընկած թթի չամիչ, մի քանի հատ մոմ և զանազան մանր մունք ապրանքներ։

Դեպի անկյունը, դարակի վրա շարված եյին մի քանի թոփ չիթ, բյաղ ու հասարակ կտորեղեն։ Սրանք եյին մանրավաճառ Յեղորի խանութի ասղրանքները։

Բայց գաղտնի ծախուժ եր մի ուրիշ բան ել։ Գյուղացիք հաճախ մտնում եյին նրա խանութը «կոկորդուները թրջելու»։ Այդ ժամանակ Յեղորը դարակի յետեկի մութ խորշից դուրս եր հանում մի տկնօր և լցնելով բաժակները, շողոքորթելով հրամցնում եր գյուղացիներին։ Հետո յերբ փողերն առնում եր, խորամանկորեն ավելացնում եր։

— Ձեր խաթրու ա վոր ես զահըումար
աբաղը ծախում եմ, թե չե մի ա գլխիցը ձեռ
վեկալել բանտերումը փառելու. դուք ձեր աստ-
ված, մարդու բան չասեք:

Գյուղացիները խոստանում եյին, վար մար-
դու չասեն և խմելուց հետո ոքոքվելով դուքս
եյին գնում Յեղորի խանութից:

— Այ կթու կովեր են հա—նքանց յետեից
հայտնում եր Յեղորն ու փողերը դաբակի արկ-
դում թրխկացնելով բեխի տակ ծիծաղում:

Յեղորի խանութում իր մշտական տեղն
ուներ գյուղի նախկին, իսկ այժմ անդորք տի-
րացուն:

Խանութի մութ անկյունում, մի փայտյա
կոճղի վրա նստած մերթ ննջում եր, և կամ
զրուցում Յեղորի հետ. Վորպես իին ձրիակերի,
նա Յեղորի անբաժան այցելուն եր, այդտեղ
նստում եր և յերբ գյուղացիները գալիս եյին
«կոկորդները թրջելու» նրան ել եյին խմեցնում
«իրենց հաշվից» և տիրացուն մեծ ախորժակով
ծծում եր իրան պարզած ողին, այդտեղ անց-
կացնելով իր որերը:

Որը կիրակի յեր. Մայր մտնող արեգակն
իր վերջին շողերն եր հավաքում դաշտերի վրա-
յից, լսվում եյին տուն դարձող նախիրի բառաչն
ու այծերի մկնոցը:

Կեսորվա տոթը կոտրվել եր, ողն սկսե-
եր զովանալ և մեղմ քամու հոսանքից բարդիւ
ները նազանքով սրարում եյին իրենց կանաչ-
տերեախիտ կատարները:

Դյուղի մի նեղ փողոցով գլուխը կախ,
մտքի գնացած, անցնում եր տիրացուն: Նա հե-
վում եր ու աշխատում քայլերն ավելի արա-
գացնել:

Նրա փալասե աբայի գղղղված մասերը ճո-
ճում եյին, դես ու գեն եյին շաբժվում նույն-
քան արագ ինչպես և վոտները, վորից լսվում
եր նրա ողուց փչացած թոքերի հեռցը: Փողո-
ցով անցնող հատ ու կենա գյուղացիք իսկի չե-
ցին ել նայում նրա կողմը, յերեի մտածելով—
եհ, նախէին քելեխ ուտող և տերտերի յետեկց
քաշ յեկող ձրիակեր մարդն ե, ով ե այլես դրանց
յերեսին նայողը:

Հասնելով մի ուրիշ փողոց, հանկարծ ծըռ-
վեց դեպի աջ և մի մեծ դարպասով մտավ մի
բակ, ուր խաղում եյին մի քանի մեծ ու փոքր
յերեխաներ:

— Աղջի, հայրիկդ տանն ե—հեալով հարց-
րեց նա մի աղջկանից, վորն առանց նրա յերե-
սին նայելու և շարունակելով իր խաղը պատա-
խանեց.

— Տանն ե:

Տիրացուն կիսամաշ սանդուխքներով բարձ.
բացավ վեր ու մտավ մի սենյակ։ Դռան ձայ-
նից սթափվեց թախթի վրա նստած Յեգորը,
վոր քունը տարել, նղըղել, ննջում եր։ Տեսնե-
լով տիրացուին, նա սթափվեց, քունն իսկույն
փախավ, կիսախուր աչքերը լայն բանալով,
հարցը եց։

— Աղա, Ի՞նչ ա պատահել, խի յես շնչա-
կուրը ըլնում։

— Տունդ քանդվումա, այ Յեգոր, — համարյա-
թե բղավեց տիրացուն։

— Վա, ցնցվեց Յեգորը նստած տեղում,
վորից թախտը ճռուաց—աղա, մի պարզ առա-
տեսնեմ ի՞նչ ա պատահել ե։

— Տո, մեր գյուղում կոռպերատիվ են
կազմակերպում։

Ռոպեյապես Յեգորի դեմքը գունատվեց,
շնչառությունն արագացավ, ձեռքերն սկսեցին
դողալ ու յերբ թախտից թռավ ցած, վոտքերն
ասես ել չեյին ուղում հնազանդվել նրան։ Վար-
քան զզվելի յեր հնջում նրա ականջին կոռպե-
րատիվ բառը։

— Ո՞վ ե կազմակերպելու, — հազիվ կարո-
ղացավ հարցնել Յեգորը։

Տիրացուն սկսեց։

— Յես գյուղամիջումն եյի, մեկ ել ական-

Հիս հասավ, վոր Հայկոռապից մարդ ե յեկել ու
ես գիշեր պետք ա ժողով կազմակերպեն։ Ասում
են հենց եղ ժողովումն ել գեղացիներին պետք
ե կոռապերատիվի անդամ գըեն։ յես ինքս աչ-
քովս տեսա են յեկած մարդին, վոր նստած եր
խընիթ ընթերցարանումը, ջահեյների հետ մաս-
լահթ եր անում։

— Եհե... յես կորած եմ տիրացու, դրանք
ինձ կոտը կդցեն, տունս կըանդեն, յեթե կազ-
մակերպին եղ կոռապերատը. ասա, ինչ անենք,
անաշեն, գոնե մի քանի որ առաջ իմացնեյիք,
մի ճար կդանեյինք։

— Այ անաշեն, յես հո Յեսայի մարգարեն
չեմ վոր գուշակեյի, յա կամ ով ա իմանում
դրանց սեկըետները, ամեն որ մի նոր սատա-
նայական բան են հոբդում, բայց իմ կարծի-
քով դեռ ուշ չի, յեթե խելք խելքի տանք մի
բան մտածենք գործը խանգարելու։

— Վհնց, խանգարենք, այ թե լավ կլիներ
հա... Դե ասա, տիրացու, դու ինքով գիր անող,
Սողոմոն իմաստունի գրվածքը խառնշտորող
մարդ ես, բա ել վոր որվա գիտաւնն ես, մի
հնար, մի ֆանդ գուիր, յա մի թլիսմ արա թող
եղ գործը բարաստվի, բարե կարկուտ գա գըլ-
խըներին, յա խընիթի կտուրը փուլ գա, մնան
տակովը, կոռապերատիվի բանը խանգարվի գնա-
լահթ եր անում։

— «Բանք ծերոց հաստատեն», ասմա սուրբ
գիրքը, իր իմաստությունով փքվեց տիրացուն, —
եղ յերեխեքը հալա թող դնան ճան խաղան,
մենք մեր բանը պիտենք, հլա դու են արաղի
բութուլը բեր դնենք առաջներս, մի խելք-խելքի
տանք, տեսնենք ինչ ենք անում:

— Ես սհաթիս, ասաց Յեգորը և մոտենա-
լով պատի դիմաց դրված պահարանին, բաց ա-
րեց, հանեց մի շիշ ողի, մի ափսեյով «չարազ»,
յերկու բաժակ ու դնելով մեջ տեղ, յերկու
«քյալաներ» դեմ առ դեմ նստան ու սկսան
«մասլահաթ» անել կոռպերատիվի գործը խան-
գարելու մասին:

2.

Խրճիթ-ընթերցարանում կենդանություն եր
տիրում: Փախոգկոմ, կոմքջիջ, կոմյերիտական-
ներ և գյուղական ուրիշ ակտիվներ իրար գլխով
եյին դիպել, դուրս ու ներս եյին անում, վազ-
վզում, անհետանում, ելի գալիս, ելի գնում ե-
յին և նրանց յետեկց գյուղացիները շաբան-շա-
բան գալիս լցվում եյին խրճիթ ու նստում:

Բայց մյուտ կողմում, քնած չեր խանութ-
պան Յեգորը, նրա հետ ել տիրացուն: Անցած
որվա «մասլահաթից» հետո, տիրացուն շատ չեր
նստում խանութում: Նա իր հաստ ձեռնափայտը

թրկացնելով ծուռ ու մուռ փողոցների քարերի
վրա, թրեռում եր ամեն տեղ մտնում աները,
հայտնվում շշարսվիա հավաքատեղերում, կանգ-
նում փսփսում եր սրա նրա հետ, վոմանց ել
մի կողմ քաշելով, քիթները կախած, խոսալով
անհետանում, մեկ ել հայտնվում խանութում,
ու Յեղորը դարակի յետևն անցած, անդադար
արադ եր տալիս յեկողներին։ Այդ որը Յեղորը
ծիծաղյերես եր դառել, առատաձեռն, վոչ վո-
քից կոպեկ չեր առնում, այլ պատվում եր իր
հաշվից, ասելով։

— Աղբեր, մի որ ել խմեք իմ սչոտից, ձեզ
պես աղբեր տղերքի շնորհիվ չե՞մ, վոր յես ես որ
մի կտոր հաց եմ ուտում։

— Քո հացն ել նրանցն ա հո, մվ չի կերել
քո սեղանից, ավելացնում եր տիրացուն և ողին
կուլ եր տալիս։

— Կյանքս չեմ խնայի, ասում եր Յեղորը,
գիտեմ, վոր բոլորն ել իմ նեղ տեղ ընկած ժա-
մանակը վոչինչ չեն խնայի։

— Եղպես ա, եղպես ա, կրկնում եյին
խմողներն ու դուրս գնում։

Բայց տիրացուն ամենքին փսփսում, կար-
գադրում, սովորեցնում եր այն, ինչ վոր վորոշ-
գած ժամին պետք ե նրանք կատարեյին հոգուտ
Յեղորի։

Այդ որը Յեգորը սովորականից շուտ կողմէց խանութը և աիրացուի հետ շտապեցին տուն։

Նրա բնակարանի խորքում առանձնացած մի դաղտնի սենյակում վառվում եր լամպարը, և աղոտ լույսի տակ, մինդարի վրա ուտելիքներով ու խմիչքերով լի սեղանի շուրջը նստած եյին Յեգորն ու աիրացուն, բայց դեռ ձեռները չեր գնում դեպի զինու շշերն ու յեփած հազերը, մսի խաշլաման. Նրանց հայացքները հաճախ ուղղվում եյին դեպի դուռը, ըստ յերեւույթին սպասելով կարեսը հյութերի։

— Քեզ հաստատ խոսք տվի՞ն վոր կդան, հարցը Յեգորը աիրացույին.

— Վհնց չե, կտրուկ պատմախանեց աիրացուն։

— Վայթե խաբեն։

— Հորդ ողորմի. Նրանց կաշին դաբախանում եմ ճանաչում. զինու և ուտելիխմելու համար գլուխները վրաները չեն. Նրանք բոլորն ել մեր մարդիկն են՝ գյուղխորհրդի նախագահը, մակել-մյուսները քիչ չեն նստել քո սեղանի գլխին, կերել խմել։

— Ինչ ես ասում տնաշեն, վոգեորվեց Յեգորը, իմ փողը, ցորենն ես բռպեյիս նրանց վրա քնում ե. յես ել համարում եմ կորած, գիտեմ, վոր նրանք մի որ ինձ պետք կդան, նրանք իմ

մասսարի մարդ են, խոսքիցու ել դուրս յեկողը
չեն:

Այդ ժամանակ սրահում լսվեց վոտնաձայ-
ներ...

— Զասացի՞ վոր իմ մարդիկն են, քչփչաց Յե-
դորն ու վեր կացավ դիմավորելու յեկվորներին:

Ներս մտան թվով 4 գյուղացիներ վորոնք
Յեգորի առաջնորդությամբ մոտեցան սեղանին,
ուր տիրացուն վոտքի յելած, ընդունեց բոլորին:

— Ծնաշեններ, ասաց նա շողոքորթելով,
փորս վեց-վեց ա անում, համա մեղքս գալիս
ա առանց ձեզ բերանս տանել ես մեռոնի պես
դինին ու թլթլան, չաղ հավերը, դե նստեք,
նստեք:

— Համեցի, ընկեր նախագահ, համեցի վեր,
տիրացու, եդ բարձը դիր նախագահի տակը թող
դինջ ըլնի. տղերք, ապա դարձավ մյուսներին,—
հո չեք ամաչում, տունը ձերն ա, յես հեչ բան
չեմ եստեղ, ասում եր Յեգորը:

Նախագահը բռնեց իր տեղը, Յեգորի և տի-
րացուի մեջտեղում, բարձի վրա, մյուսներն
ել շարքով բռնեցին իրենց տեղերը, տիրացուն
խաչակնքեց սեղանն և կեր ու խումն սկսվեց:

Առաջին բաժակը նախագահը վերցրեց ու
խմեց Յեգորի կենացը, բարեմաղթելով նրա
դործին, առևտրին հաջողություն:

— Իմ հաջողությունն ել ձեզանով ա տը-
ղերք, ասաց Յեգորը, իմ ունեցածն ել, ձերն
ա, իմ տունը և խանութը միշտ բաց ա ձեզ
համար, քանի կարաք կերեք, խմեք, տարեք,
թե վոր խոսամ, ասեք Յեգորը վատ մարդ ա:

— Շնորհակալ ենք, շնորհակալ ենք, կե-
նացդ, միաբերան կրկնեցին բոլորն ու խմեցին:

Բայց գլխավոր դերը վերապահված եր տի-
րացուին, նա վերցնելով բաժակը, անմիջապես
կպավ Յեգորին վտանգ սպառնացող կոռպերա-
տիվի խնդրին, ասելով, վոր—ես հացին մենք
«քոռ» պետք ե մատիկ տանք, յեթե թողնենք
գլուխ զա եղ բանը և ես մարդը կործանվի:

— Դե ջանըմ, ինչ վոր դրված ա մարդուս
ճակատին, պետք ա լինի. չքմեղացավ Յեգորը,
ինչ կարող ենք անել:

— Այ մարդ, դու հենց եղ գլխից զաթի
եղպես ես, վրա բերեց տիրացուն,—դու քու
տանից-տեղից, ունեցածից ձեռք վերցրած մարդ
ես. բայց մենք հո խելքներս հացի հետ չենք
կերել, բաս ել վոր որվա համար ենք. մեր նա-
խագահի քյալեն սաղ ըլնի, ուզենա մի մատի
շարժումով փողմիշ կանի եղ կոռպերատիվի բանը:

— Հա, հա, հա... են կողմից կեղծ ծիծա-
ղով հեգնեց յեկողներից մեկը, տիրացու, ար-
դեն փողմիշ ելած ա...

— Վանց, վրա պըծավ տիրացուն, արդեն
ժողով ա, եղ հարցը պետք ե վճռվի եսոր իրիկուն:

— Ժողովը կարող ալիսել, բայց մի պետք
ա մատ բարձրացնի, կամ թե անդամ գրվի. հե-
ղինակորեն ասաց նախագահը:

— Զանըմ, Հակոն գիդի, նախիրը դվորը
կըշի... ասաց Յեգորն իր հոգու մեջ զգալով մի
բերկրանք:

Տիրացուն հրճվանքով բոթեց Յեգորին, վոր
ուզում եր ասել — հը՛, վոնց ա իմ քյալլեն, ա-
պա վեր առավ բաժակը և նորից խմեց նախա-
դահի և իր ներկա ընկերների կենացը:

3.

Խրճիթ-ընթերցարանում ժողովս սկսվել եր.
խոսում եր Հայկոսպի հրահանդիչը, պարզելով
սպառկոռպերացիայի քաղաքական ու տնտեսա-
կան մեծ արժեքը, նրա տված ոգուտները, ապա
կանգ առնելով այն բանի վրա, թե ինչպես չար-
չիներն ու մասնավոր խանութները կեղեքում
են աշխատավոր գյուղացիությանը:

— Ճիշտ ես ասում, բարձրացավ ժողովա-
կաներից մեկը, — մեր գյուղի խանութպան Յե-
դորը շաքարի ֆունտը ծախում ա մի մանեթով
ու բացի եղ, գաղտնի խմիչք և ծախում և զար-
դացնում ե հարբեցողությունը:

— Տո, յեղբայր, նրա ինչն եք ասում, ինչ
ասես չի անում, վերըս մեզնից պարտքի մեջ
թաղված չի, և տալով-տալով չենք աղատվում
Յեգորից:

Բայց այդ ժամանակ յետի անկյուններից
բարձրացավ կասկածելի դեմքով մեկը, վորի աշ-
քերը կարմրել, քիչ եր մնում բիբերից դուրս
թռչեն, իսկ յեթեսն ալքոհոլի գոլորշուց ուռել,
յեփած բազուկի գույն եր ստացել: Նա խռպոտ
ձայնով մի անգամից վրա պրծավեսկանեց բղավել:

— Ինչի՞ յեք սուտ ասում, ինչ վատ մարդ
ա Յեգորը. վնաս ե տվել, վոր ամեն տարի գար-
նանը հորերը հանում ա և բոլոքիդ ուտելու հաց,
սերմացու, փող ա տալիս, վերիդ նա չի ոգնել
իր ունեցածով, վոր հիմի նստել եք եստեղ ու
նրան բամբասում:

— Դուրս, դուրս եղ հարբեցողին, այս ու
այն կողմից լսվեցին ձայներ:

— Ումը դուրս անեք աղա, թերել յետ
քաշելով և բոռնցքը շարժելով պատասխանեց
առաջինն ավելի բարձրացնելով ձայնը— հալա-
մի փոքձեցեք, տեսնենք ով կփոշմանի:

— Նախագահի, նախագահ, ուր ա մեր նա-
խագահը. ինչու չի յերեսում:

— Գյուղամիջումը մարդիք ա կանչում...
պատասխանեց մեկը...

— Ախր ինչի՞ յես սուտ ասում, բղավեց մի ուրիշը, Յեգորի կողմից յեկածներից մեկը— հենց դու ինքո ինչքմն ցորեն ես պարտք Յեգորին, հը՞, ասա, ինչի՞ չես տալիս:

— Դմւ վորտեղից դուքս ընկար Յեգորի հողաթափ, պատասխանեց հակառակորդը, քեզ ինչ թե պարտք եմ, քեզ ինչ թե չեմ տալիս, դու դնա քո լափը լակի նըա տանը:

— Ձենդ կտրի շուն շանվորդի, քու հերն անիծած, բղավեց խոսողը և վրա ընկափ հակառակորդին։ Բոռւցքները բարձրացան ողի մեջ ու իջան, կորիմն ու աղմուկն սկսվեց։

Այդ ժամանակ յեթե ուշի ուշով հետազոտեյիք Յեգորի ընակարանի չորս կողմը, կտեսնեյիք վոր մթության մեջ, ստվերի նման այնտեղերք թրե եր գալիս մեկը—մի կոմյերիտական, վորը «Մաճկալի» թղթակիցն եր։ Նա վերջապես կանգառափ տան յետևում մի պատի տակ, վորի բարձրում, նեղ լուսամուտից յերեսում եր ճրագի լույսը։ Նա հեշտությամբ մագլցեց վեր, կախվեց լուսամուտից և գլուխը խոթելով ներս, սկսեց հետազոտել ներսը։

Նրա համար պարզվեց ամենը, թե ինչպես գյուղիորհրդի նախագահը յուրայիններով նըստած Յեգորի սեղանի շուրջը, կեր ու խում են

անում և բարեմաղթում նրա հաջողությանը՝
ապա ցած թռչելով, անհետացավ մթության մեջ։

Նախագահն ու իր ընկերները բավական
կոնծելուց հետո, դլուխները տաքացրած դուրս
յեկան Յեղորի տանից և շատապեցին խրճիթ,
հասան են ժամանակ, յերբ ժողովականների մեջ
սկսել եր խառնակություն, ուր խանգարիչ դեր
եցին կատարում Յեղորի կողմից դիտավորյալ
կերպով յեկած մարդիք, վորոնց ճանաչում եր
և նախագահը։

— Ես վոնց ա ձեր բանը, բղավեց հարբած
նուխագահը։ — հայա ես մի սահաթ ա վոր բացա-
կայեցի եստեղից, իրաք յախա-բաղազ եք պատ-
ռում, բազքի յես ես գեղից մի որ բացակայում
եմ, բաս վմաց կլինի։ բանն ինչումն ա, ով ա մե-
ղավորը, ապեք գցեմ «կուտուղկան» մկների
հետ մի լավ ջրիդ խաղ անի։

— Այ, են պիտանից Թորոն, վոր հակառակ
ա խոսում կոռպերացիային, — խանութպան Յե-
ղորի կողմն ա պաշտպանում, ասաց նույն այդ
մարդու հետ վիճողը։

— Քեզ ինչ, տաքացավ նախագահը — եսի
հասարակության ժողով ա, ով բերան ունի
պետք ա խոսի։

— Բայց խելքը ուխին բան խոսի, թե չե
ուեխը շաղ տալի ու ժողովը խանգարում ա։

— Համա... բարկացավ նախագահը, ուշեմն կորիվ դցողը դու յես և վոչ թե Թորոն, դե դուքս խրճիթից:

— Իրավունք չունես ինձ դուքս անելու, հակառակեց վիճողը. քեզ ել եմ ճանաչում և պարոն» նախագահ:

— Դուքս կորի եստեղից, թե չե զլուխդ կջարդեմ, բղավեց նախագահը և վրա պրծնելով, բռնեց հակառակորդի ոձիքից և սկսեց ուժով դուքս քաշել դեպի դուռը: Մի քանիսներն սկսան պաշտպանել դուքս քաշվողի կողմը, մյուսները նախագահի, աղմուկն ավելի սաստկացավ, վորից ժողովականներից շատերը դուքս գնացին զըդվանքով, մյուսներն ել իրար խառնված, միսան միմյանց քաշքշել, մինչև վոր ժողովը ապար-վեց և ամեն մարդ գնաց իր տունը:

4.

Յեղորի և տիրացույի ծրագիրը քհաջող-ված եր». նախագահի ոգնությամբ կոսպերացիայի հիմնական հարցը վիժեց և նրանք ինքնարավական կերպով քթի տակ բավական խնդացին:

Նախագահը Յեղորի աշքի լիսն եր դառել, վոր շարունակ ուրուր եր տալիս նրա շուրջը իսկ Յեղորն շատպում եր կտտարել նրա ամեն մի պահանջը:

Բայց քնած չեն տեղական կոմբջիջը և
կոմյերիտականները։ Նախ քան իր թղթակցու-
թյունն ուղարկելը «Մաճկալ»-ին, մեզ ծանոթ
կոմյերիտականը բոլոր մանրամասնությունը
հայտնեց ընկերներին և ամենքի համար պարզ-
վեց հայտնի դավադրությունը կոոպերացիայի
գործի դեմ։ Գումարելով միացյալ նիստ, քննե-
ցին գործի մանրամասնությունը, կազմեցին
անհրաժեշտ արձանագրություն նախագահի վե-
րաբերմունքի և բռնած դիրքի մասին, ուղար-
կեցին ուր հարկն ե, պահանջելով կարգադրու-
թյուն, իսկ մինչև այդ, ոքերից մեկում, գյու-
ղացիք լցված խճնիթում, պարապում եյին ըն-
թերցանությամբ, յերբ մեկ ել մտավ փոստա-
տարը և բաց անելով արկղը, հանեց մի կապոց
լրագրեր և գրեց սեղանի վրա։

Դյուդ-խորհրդի նախագահն այդ ժամանակ
նստած եր մի անկյունում, իր քարտուղարի
հետ զբաղված եյին ինչ վոր գործով։

Բաց անելով լրագրի կապոցը, խճնիթվարը
բաժանեց ամենքին ինչ վոր ստացվել եր, ըստ
հասցեյի և նոր ստացված թարմ լրագիրը ձեռքե-
ձեռք անցնելով, սկսան կարդալ։

Կոմյերիտականների մի խմբակ, հավաքված
իրար գլխի, կարդում եյին «Մաճկալ»-ը, յերբ

հանկարծ ընթերցողից մեկը վրա ընկավ մի հոդվածի և բացականչեց.

— Լսեցնք տղերք, լսեցնք, նորություն, նոր հոդված մեր գյուղից:

Նըանց շրջապատեցին. և ուրիշներն ու ընթերցողն սկսեց բարձրածայն կարդալ հոդվածը:

— Նախագահի մասին ե, նախագահի, ամեն կողմից բարձրացավ շշուկ և ամենքն ել ելեքտրականացան հոդվածի վրա, ու ինչքան հոդվածը պարունակող «Մաճկալ» կար, բոլորն ել սկսան միաժամանակ կարդալ:

Հանկարծ ուշքի յեկավ և նախագահը, լսելով իր անունը, վոր հարցն ու հետաքրքրությունն իր մասին ե, անմիշապես հափշտակեց մի «Մաճկալ» և սկսեց կարդալ: Սկզբում թըվաց, թե հոդվածը նըա վրա վոչ մի ազդեցություն չի թողնում. բայց հետո, ընթերցման հետ միասին սկսեցին դողալ ձեռքերը և «Մաճկալ»-ը թոթուալվեր ու վար. կամաց-կամաց գույնը յերեսից թուավ, դեմքը ծամածովել, վոր վերջացնելուց հետո, թերթը վայր քցեց սեղանի վրա ու չոքս կողմն աչք ածելով, յերևի զննելու համար թե ով ե գըել, մի անգամից հանկարծ պայթեց և դրա հետ միասին հայնոյանքների և սպառնալիքի մի տարափ թափել գրողի հասցեյին: Հոդվածը մանրամասնորեն կանգ եր առել

նախագահի վոչ միայն անշնորհքության, այլ և
նրա իբրև անհարազատ տարը լինելու, նրա կա-
պը կուլակների հետ, վորոնց ձեռքին իբրև գոր-
ծիք, լքում ե խորհրդային շինարարությունը և
թե ինչպես կոռապերապտիվ բանալու ժողովի որը
նա խմում եր խանութպան Յեգորի տանը, վո-
րոնց հետ միասին խանգարեցին վոչ միայն ժո-
ղովը, այլ և խանգարեցին կոռապերատիվի բա-
ցումը գյուղում:

Նախագահի պայթելը վոչ մի հետեանք չու-
նեցավ, վորովհետեւ նա չկարողացավ պարզել
հոդվածագրի ով լինելը, Թղթակից կոմյերիտա-
կանը ուրիշների պես չեր սիրում «պարծան-
քով» հայտնել իր կեղծ անունը. նա լուրջ և
լռակյաց ընկեր եր, բայց իսկական «ցեց» Խոր-
հրդային իշխանության հակառակորդների հա-
մար, շարունակ սուր հոդվածներով պարզելով
նրանց ով և ինչ լինելը:

Յեվ նախագահը շատերի ոճիքից բռնեց,
շատերին հայիոյեց, սպառնաց, բայց չկարողա-
նալով գտնել իսկական գրողին, պոչը կտրած
ոճի նման տագ արեց, սպասելով մի որ գտնել
և շանթել նրան:

Բայց ուրբաթը շուտ յեկավ քան շաբաթը:
Եատ չեր անցել, վոր մի որ գյուղամիջում կանգ
առավ մի ավտոմոբիլ, մի խումբ մարդկանցով,

վորոնք ցած իջնելով դիմեցին դեպի խրճիթ։
Պարզվեց, վոր նրանք յեկել են շրջանից ու գա-
վառից, քննելու նախագահի արարքն ըստ կոմ-
բջիջի արձանագրության և «Մաճկալ»-ի հոդվածի։

Կոմբջիջի, կոմյերիտականերից շատերի և
գյուղացիների աջակցությամբ ամեն ինչ պարզ-
վեց հանձնաժողովի առաջ, վորից միանդամայն
վտարեցին նախագահին իր պաշտոնից ու գյուղ-
խորհուրդից վորպես բարաստ, անպետք ելեմեն-
տի և կուլակային տրամադրություններին յեն-
թակա ու հարբեցողի։

Գյուղական ընդհանուր ժողովի կողմից
զտվեց նաև գյուղխորհրդի կազմը, ներս մտան
խորհրդայնապես կենսունակ, առողջ տարրեր—
բատրակներից, չքավորներից ու միջակներից,
նախագահ ընտրվեց մի յերիտասարդ կուսակ-
ցական բատրակ, վոր կոմբջիջին, կոմսոմոլին
ու տեղական որդաններին թե ու թիկունք ա-
րած, սկսեցին կազմակերպչական շինարարական-
խելացի աշխատանքներ։

Յեգորի ոլորքը յետ տվեց, կծիկը խառնվեց,
քիթը քարին կպավ, վորովհետև կոռպերացիայի-
գործը հարյուր տոկոսով հաջողվեց ու խանու-
թը բացվեց հենց իրան—Յեգորի կրպակի դիմաց։

Ամեն առավոտ, ծեգն սկսվելուն պես, բաց-

գումար եր կոռպերատվը, գյուղացիք մրջյունի պես
շտապում եյին այնտեղ:

— Գրիգոր ջան, մի սապօն տուր, սպիչկա:
— Ինձ ել թեյ ու շաքար:
— Են չթից մի հինգ մետր կտրի Գրիգոր
ջան, ամեն կողմից ձեն եյին տալիս անդամ-
ներն, իսկ հմուտ գործակատաք Գրիգորը քաղցր
գեմքով, արագ ու չափուկ ամենքին բավարա-
րում եր, հետն ել իր կտակներով ծիծաղաց-
նելով ամենքին:

— Տղերք ջան, ասում եր Գրիգորը հաճախ
մետրը ձեռքն առնելիս ու կտորը չափելիս—
աշքներդ վրա պահեք մեր խանութում փեյդա
չգան յերկու ջանավարներ, թե չե մեր բանը
բուրդ կլինի:

— Եղ ինչ բանը են դրանք, հարցնում ե
ներկաներից մեկը:

— Վայ, տնաշեն, չես իմանում, քմծիծաղ
եր տալիս Գրիգորը—մեկը մուկն ա, վոր ուտում
ա մեր շաքարը, բրինձը, մոմպասը, կտրում ա
մանուֆակտուրեն, մեկն ել կուլակներն են, վոր
կաշառված անդամների միջոցով «խնամիաբար»
դուրս են տանում մեր ապրանքը կոռպերատիվից:

— Այ համա ասեցիք հա... Շատ դրուստ
ա, ավելացնում եյին ամենքը և կոռպերատիվը
որ ավուր վրա բարգավաճվում եր:

Կամաց-կամաց Յեգորի չուլը փորի տակն ընկավ, խանութը զատարկվեց, ուր մի ժամանակ միայն գինի ու ողի յեր ծախում, բայց աշակուրջ նախագահի կողմից այդ ևս կտրվեց, յենթարկվելով մի քանի անգամ տուգանքի:

Յեգորը դարձավ փորում թույն հավաքած, ֆշացնող մի ոճ և ամեն որ նրա մտածմունքի առարկան կոռպերատիմս եր, թե ինչպես վերջ տա իր քթի առաջ «ցցված» եղ հիմնարկությանը:

Իր խանութում նա մենակությունից խելագարվում եր, յեթե տիբացուն փալասի պետամեն որ, առավոտից մինչև իրիկուն վեր ընկած չլիներ: Սա ել իր հին տեղում միշտ նստած, գլխով հավանություն եր տալիս նրա անեծըներին ու հայիոյանքներին, վոր միշտ իր դարդերից եր խոսում:

Նրա խանութում միշտ նստած եյին լինում մի կամ յերկու հնամյա ծերունիներ, վորոնք հենքած իրենց ձեռնափայտերին հորանջում ու ննջում եյին, կամ վերհիշում իրենց անցյալ ու բերը:

— Տիբացնւ, մի որ ասաց Յեգորը նրան, բա եղ քու իմաստուն գլխում ել հունար չի մնացել եղ կոռպերատիվին վերջ տալու...

— Որերով յես ել հենց զբա վրա յեմ մտածում ու վերջը յեկել եմ վորոշ յեզրակացության:

- Որինակ ի՞նչ...
- Պետք ա վառել:
- Վճնց թե, ի՞նչը վառել:
- Այ, կոռպերատիվը...
- Հըմ... մտածեց Յեգորն ու մտքի գնաց,
ասկա քնածի պես զարթնելով, աչքերը չուելով
տիրացույի վրա, մրմռաց...
- Լավ ես մտածել մեր տղա, բայց յեթե
իմացվի...
- Սատանան ել չի իմանա, ի՞նչ վոր դը-
րանք են եշի ականջումը քնած:
- Վճնց, զարմացավ Յեգորը:
- Բաս ի՞նչ, խանութը լիքն ապրանք լըց-
րած, իրեք կոպեկանոց մի դֆիլ դնում են վը-
րան ու գնում քնում. ի՞նչ ուզենանք չենք կա-
րող անել:
- Վոր եղպես ա, ի՞նչի՞ վառենք, վոր կոր-
չի եղքան ապրանքը, հազը մաքրել տանք ելի:
- Համ են, համ են, հեղինակավոր տոնով
ասաց տիրացուն, վոր ուզում եր ասել, թե ա-
ռաջ դողանանք հետո վառենք:
- Յեվ Յեգորն ու տիրացուն այդ որվանից
գործի անցան:
- Սուր աչքերը կարող եյին նկատել, վոր գի-
շերները Յեգորի տանը ներս ու դուրս եյին
անում կասկածելի մարդիկ, ուստում խմում ե-
յին, քչփչում ու գաղտագողի դուրս գնում:

Մի իրկնամուտ եր, վոր Յեղորը մի խուր-
ջին ուսին գցած, անցնում եր գյուղի վողոց-
ներով և ամենքին հայտնում, վոր ինքը գործով
քաղաք ե գնում։ Յերբ դուքս յեկավ գյուղից,
արդեն ամենքը քնած եյին իրենց խաղաղ խըր-
ճիթներում, ուստի Յեղորը խցկվեց կանաչ մա-
ցառների մեջ, նստեց ու սպասեց։

Հետզհետե գիշերային մթության մեջ Յե-
ղորին մոտեցան նույն կասկածելի մարդիկ, ապա
տիրացուն, իրենց հետ վերցրած մեշոկներ և
մի նավթի աման։

— Գիտե՞ք, փսփսաց ներկաներից մեկը։ —
կոռպերատիվի պատի յետեից կարելի յե պատը
ծակել և ամեն ինչ տանել։

— Ճիշտ ե, հարեց տիրացուն, ենտեղ ան-
մարդաբնակ ե և մի ավերակ տուն, հենց եդ-
տեղից կարելի յե գործն սկսել։

Այնուհետև մեկ մեկ քաշվեցին ստվերներն
ու մտան գյուղ, ուղևորվելով դեպի կոռպերա-
տիվի խրճիթի յետել։

Գյուղի փողոցները միանգամայն ամայի-
եյին. շներն անգամ հանգիստ մրագում եյին
խոտի դեղերի գլխին, իսկ կոռպերատիվի խա-

նութի շենքը միանգամայն լուռ, մթության մեջ կանգնած եր անպաշտպան ու մենակ: Ասես նա ցավից տնքում եր, յերբ իր յետևի պատի մեջ զգուշ ու կամաց գործում եյին քլունգն ու «լինդը»:

Կես գիշերից անց, կոռապերատիվի մերձակայքից, մթության մեջ սլաքի նման անհետանում եյին մարդիկ, ճկված լիքը մեշոկների ծանրության տակ, վորոնք խանութի ապրանքը քաշում եյին նախորոք վորոշված թագստոցը: Դործն արդեն վերջացրած՝ գաղտապողի, կուզեկուզ գնում եյին նաև Յեղորն ու տիրացուն ամեն մեկը մի բան առած թեսերի տակ, ապահով, վոր վոչ վոք չկա, վոր հասկանար, կամ տեսներ նրանց վոճիրը: Նրանք շտապում եյին իրենց տան կողմը: Ու յերբ կոռապերատիվի սահմանից ծովեցին մի այլ փողոց, հենց նույն դյուղացին, վոր կռվի բռնվեց Թորոյի հետ ժողովում, պատահաբար իրենց դարպասից դուրս գալով ու հեռվից նկատելով յերկու մոռեցող ստվերներին, ինչ վոր կասկած ծաղեց նրա ոըրտում, ուստի սքլվելով դարպասի յետևը, սպասեց, մինչև նրանք յեկան ու անցան իր առջեռվ:

— Տիրացուն ու Յեղորը... շշնչաց նա ինքն իրան, — վարտեղից են գալիս ես գայլերը, ինչ բան և թեսերի տակինը և դուքս գալով նորից

փողոց, բավական ժամանակ մնաց կանգնած խիստ տարակուսված։

Հենց այդ ժամանակ, հանկարծ մթության մեջ փայլատակեց մի լույս և ելի անհետացավ. գյուղացին տեսողությունը լարեց, սկսեց նայել չորս կողմը, մթության մեջ, յերբ լույսը վայրէ կենաբար ելի փայլատակեց ինչ վոր կարմիք արյան գույնով, ելի հանգեց, ելի բարձրացավ և այս անդամ ծավալելով գիշերային մը-թությունը։ Դյուղացին կասկածելով վազեց գեղի ցած, ուր սկսել եյին յերեալ կրակի լեզուներ. Մոտենալով կոռպերատիվին, նա իր աչքերին չհավատաց, վոր այրվում և կոռպե-րատիվ խանութը և հանկարծ սթափվելով, մի անդամից ուժով մեկ սկսեց բղավել ու վազ-վզելով փողոցները, ահազանգ տալ.

— Հավար, հավար, հասեք, կոռպերատիվը վառվում ե։

Ահազանգը տարածվեց գյուղով մեկ, և գյուղացին, վոր կոռպերատիվում թորոյի հետ վիճող անձնավորությունն եր, վորին նախագահը բռնությամբ դուրս քշեց խբճիթից, և վորը նույնպես ընտրվել եր արդեն գյուղ-խորհրդի անդամ, իսկույն իմաց տվեց նախագահին կոմ-բջիջի քարտուղարին ու շատ ընկերների, մե-կեն գյուղը վոտքի կանգնեց և շտապեց դեպի

կոռպերատիվ, վերցրած դույլ, կճուճ, բղուղ, կամ, բահ ու քլունգ։ Շենքը ամբողջովին ըը-ռընկված, չոքս կողմից այրվում եր, բարձրանում եյին հրեղեն լեզուները՝ գյուղով մեկ տարածե-լով չարագուժ ծուխն ու մառախուղը։

Շատ ուշ հանգվեց կրակը, բայց շենքն ար-դեն այրվել եր ամբողջովին։ Հետազոտությունը հայտնաբերեց հրդեհում դործող չար ձեռքերի գոյությունը, գտնելով խանութի յետեի պատի մեջ բացված անցքը։ Դյուղխորհրդի ականատես անդամի ցուցմունքով անմիջապես ձերբակալ-վեցին տիրացուն ու Յեզորը։

Այդ գիշեր չքննցին խորհրդի, կոմբջիջի, կոմմոմոլիք բոլոր անդամները։ Կանգնած լինելով կատարված տխուր փաստի առաջ նրանք յեր-բեք չեյին կասկածել ու յենթաղբել, թե ինչ վտանգ և վթրտեղից կարող եր առաջ գալ կոռպե-րատիվի հասցեյին։ Բոլորն ել ուրուրի նման ցրվեցին գյուղի բոլոր անկյունները հայտնաբե-րելու գողացված ապրանքները։

Սոսկաց տիրացուն իր ամբողջ եյությամբ, սկսեց դողալ և իր կաշին փրկելու համար ամ-բողջ մեղքը բարդեց Յեղորի վրա, խոստովանե-լով ամեն ինչ և իշխանության ձեռքը տալով դավադրությանը մասնակցող բոլոր ընկերնե-

ըին։ Տարված ապրանքն ամբողջովին գտնվեց և
հանցագործները բանտ ուղարկվեցին։

Մյուս որն և յեթ կայացավ համայնական
ժողով, գյուղական բոլոր որդանների անհատա-
կան ու հասարակական ընդհանուր միջոցներով
կպահ գործի, ուր ղեկավարում եր գլխավորա-
պես սխալն ուղղելու գիտակցությունը և կարճ
ժամանակում կառուցեցին այս անգամ ծրա-
գըրված ավելի հարմաք ու գեղեցիկ շենք և կո-
ոպերատիվը հաղթական կերպով ծառացած այր-
ված շենքի փլատակների տեղում, իր ճակատին
կրում եր փառավոր ցուցանակ, իսկ գլխին կար-
միր, ծածանվող դրոշակ։


Այժմ ընթերցողին կրնետաքըքըրի մի հարց,
թե ինչ յեղավ կոոպերացիայի ղեմ մեղանչող-
ների վերջը։

Կորպես իրական բայց բացառիկ դեպք,
իր վնասակար կողմերով, ապա դեմքեր, վորոնք
զոհ և գործիք դարձան կուլակ տարրերին՝ վնա-
սելով խորհրդային-սոցիալիստական շինարարու-
թյանը, գյուղ համայնքի խոհուն մտածող շեր-
տը նրանց մասին պահանջեց կազմել ցուցա-
դրական դատ—գործը քննել մասսայի ներկա-
յությամբ։


Յեզ ահա մի որ դատական սեսսիան իր
ամբողջ կազմով յեկավ շրջան, հայտարարեց ա-

յենքին ցուցադրական դատի մասին, ուր շտապեցին վոչ միայն գեպքը կատարված զյուղացիք, այլ և մյուս համայնքներից շատերն, ականատես լինելու գործի քննությանը:

Ներկա եյին բազմաթիվ վկաներ, առաջատար լուսաբանող ու պարզաբանող կողմեր, մեղադրողներ և պաշտպանողներ, վորպիսի պրոցեսը տևեց մինչև 4 որ: Յեգորը վորպես կուլակ, իսկ տիրացուն վորպես ձրիակեր հոգևորականության կաստայում յեփված, անուղղելի ելեմենտ և կուլակի խորհրդատու, յենթարկվեցին կալանքի յերկար տարիներով, իսկ նրանց աղդեցության տակ գործիք դառած անգիտակից չքավոր գյուղացիները կարճ ժամանակում զղացին իրենց արածն, ուղղիչ տանը սովորեցին գրագիտություն ու դուրս գալուց հետո, կյանքի մեջ, դաբան որինակելի աշխատավորներ մեր շինարարության ասպարիզում:







ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0045857

(104.)

A
865

677

ԳԻՒԸ 10 Կ.